

Կենսաբանություն, I ՓՈԻԼ  
տևողությունը 60 րոպե  
9-րդ դասարան

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

**1. Պարզ ծաղկաբույլ ունի**

- 1) յասամանը
- 2) արևածաղիկը
- 3) ցորենը
- 4) սամիթը

**2. Փայտացողուն բույսերի ցողունում գոյացնող հյուսվածքով է կազմված.**

- 1) կեղևի արտաքին շերտը
- 2) կամբիումը
- 3) լուբային պարենքիմը
- 4) բնափայտային պարենքիմը

**3. Բակտերիաները բազմացման ձևերն են.**

- 1) կոպուլյացիան
- 2) կոնյուգացիան
- 3) ուղղակի կիսում
- 4) սպորառաջացումը

**4. Աղեխորշավորների տիպի ներկայացուցիչներին բնորոշ է.**

- 1) Բջիջների տարբերակում
- 2) եռաշերտություն
- 3) արտաաղիքային մարսողություն
- 4) հանգուցային տիպի նյարդային համակարգ

**5. Կոճիկային ձկների լողափամփուշտը.**

- 1) մասնակցում է գազափոխանակությանը
- 2) հիդրոստատիկ օրգան է
- 3) ռեզոնատոր է հանդիսանում
- 4) բացակայում է

**6. Ստորև բերված գործառույթներից ո՞րը չեն կատարում արյան պլազմայի սպիտակուցները**

- 1) ապահովում են արյան մածուցիկությունը
- 2) մասնակցում են արյան մակարդմանը
- 3) մասնակցում են իմունային ռեակցիաներին
- 4) հանդիսանում են մարսողական ֆերմենտներ

**7. Ջերմակարգավորման գործընթացները տեղի են ունենում առանց**

- 1) Մաշկի ջերմընկալիչների մասնակցության
- 2) Ողնուղեղի մասնակցության
- 3) Ենթատեսաթմբի մասնակցության
- 4) Մակուղեղի մասնակցության

**8. Էպիթելային հյուսվածքի տարատեսակ չի համարվում**

- 1) Միաշերտ էպիթելը
- 2) Գեղձային էպիթելը
- 3) Փխրուն էպիթելը
- 4) Թարթիչավոր էպիթելը

**9. Անփոխարինելի ամինաթթու չէ.**

- 1) վալինը
- 2) մեթիոնինը
- 3) սերինը
- 4) ֆենիլալանինը

**10. Գլխկոզներ**

- 1) մոնոսախարիդ է
- 2) պոլիսախարիդ է, բուսական բջջի սննդար պաշարանյութ
- 3) պոլիսախարիդ է, կենդանական բջջի սննդար պաշարանյութ
- 4) դիսախարիդ է, կենդանական բջջի սննդար պաշարանյութ

**11. Սպիտակուցի առաջնային կառուցվածքը պայմանավորված է**

- 1) ջրածնային կապերով
- 2) դիսուլֆիդային կապերով
- 3) հիդրոֆոբային փոխազդեցություններով
- 4) կովալենտային, պեպտիդային կապերով

**12. Մատրիցային սինթեզի ռեակցիաներ են.**

- 1. ճարպերի և ածխաջրերի սինթեզը
- 2. ճարպերի և ածխաջրերի ճեղքավորումը
- 3. ԴՆԹ-ի մոլեկուլի ռեպլիկացիան և Ի-ՌՆԹ-ի սինթեզը
- 4. Էներգետիկ փոխանակության անաերոբ փուլի ռեակցիաները

**13. Մեռական պրոցես է համարվում.**

- 1 – բեղմնավորումը
- 2 – սեռական բջիջների առաջացումը
- 3 – վիրուսի ներթափանցումը բջիջ
- 4 – գենետիկական ինֆորմացիայի փոխանակումը նույն տեսակի առանձնյակների միջև:

**14. Դաունի հիվանդության պատճառը ավելորդ քրոմոսոմի ի հայտ գալն է 21-րդ զույգում: Ի՞նչ տիպի մուտացիա է սա:**

- 1) քրոմոսոմային
- 2) գենային
- 3) գենոմային
- 4) սոմատիկ

**15. Սպիտակ մկների երկու գծերի խաչասերումից առաջին սերնդի բոլոր մկները սպիտակ էին, իսկ երկրորդ սերնդում կային և՛ սև և՛ սպիտակ մկներ: Մկների մազաձևկույթի գունավորումը կոդավորվում է.**

- 1) մեկ գենով, սպիտակ գույնը դոմինանտ է
- 2) մեկ գենով, սպիտակ գույնը ռեցեսիվ է
- 3) երկու գենով, սպիտակ գույնը դոմինանտ է
- 4) երկու գենով, սպիտակ գույնը ռեցեսիվ է

**Կարճ պատասխանով առաջադրանքներ**

16. Ռիբոնուկլեազ ֆերմենտը կազմված է 124 ամինաթթվային մնացորդից: Քանի՞ պեպտիդային կապ է պարունակում նրա առաջնային կառուցվածքը:

17. Շունն ունի 78 քրոմոսոմ: Քանի՞ քրոմոսոմ են պարունակում նրա առաջին կարգի օօցիտները

18. Aa x AA խաչասերումից ստացած սերնդի ո՞ր տոկոսն է հոմոզիգոտ ըստ ռեցեսիվ հատկանիշի:

19. Քանի՞ զույգ հոմոլոգ քրոմոսոմներում են պարունակվում ոլոռի սերմերի ձևի և գույնի ժառանգման համար պատասխանատու գեները:

20. Քանի՞ տարբեր գենոտիպ կարելի է սպասել սերնդում եթե խաչասերել տոմատի կարմիր գնդաձև պտուղներով դիհետերոզիգոտ բույսը նույնանման բույսի հետ: